ՆԱԽԱԳԻԾ

# «ՎԵՐՆԱՏԱՆ» ԱՆԴԱՄՆԵՐԸ՝ «ԻՎԵՐԻԱ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՍՊԵՏՆԵՐ



*Վրաց արձակի եւ պոեզիայի զարգացման ու մասսայականացման նպատակով, 2013 թվականին մեկնարկեց վրաց անվանի գրող, հրապարակախոս, ազգային-ազատագրական շարժման առաջնորդ, վրաց եկեղեցու սուրբ Իլիա (Արդար) Ճավճավաձեի (1837-1907թթ.) կողմից 1877 թվականին հիմնադրված «Իվերիա» թերթի անունը կրող նախագիծը:*

Ձեռնարկի կարեւորություններից մեկը առավել հնարավորությունների տրամադրումն է սկսնակ, ժամանակակից ու ավագ սերնդի ստեղծագործողներին: Ծրագիրն իրականացվում է Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի օրհնությամբ: Նախագծում ընդգրկված են գրողներ, նկարիչներ, լուսանկարիչներ, դատապարտյալներ ու սահմանափակ կարողություններով անձինք, իսկ 2017 թվականից նաեւ երկրի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Ողջ տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվող հանդիպումների ժամանակ, մասնակիցները ներկայացնում են իրենց գործերը: Տարեվերջին հանձնաժողովը ամփոփում է արդյունքները, եւ լավագույններն արժանանում են մրցանակի, իսկ նրանց ստեղծագործական արարումները տեղ են գտնում «Վրացական էլիտա», «Հատուկ ամսագիր», «Կնքահայրը» պարբերականներում: Եվ որպեսզի պահպանվի արդարության սկզբունքը, հանձնաժողովի կազմում ներգրավված անդամների ով լինելը հայտնի չէ մինչանց, նրանցից գաղտնի է պահվում մասնակից-հեղինակների անունները եւս:

Մեծ հետաքրքրություն առաջացրած ծրագրի հիմնադիր եւ հեղինակ, գրող, լրագրող Նուգզար Ճիաբերաշվիլին գտնում է, որ մրցանակ-նախագծի ձեռքբերումներից մեկը առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, դատապարտյալների սոցիալականացումն ու ինտեգրումն է հասարակության մեջ:

Եվ քանի որ Իլիա Ճավճավաձեի «Իվերիա» թերթի առաջին համարը լույս է ընծայվել 1877թ. մարտի 3-ին, մրցանակաբաշխությունը ավանդաբար անց է կացվում հենց այդ օրը:

Այս տարվա տոնական միջոցառումը կազմակերպվեց մայրաքաղաքի «Յոտա» (Կաթիլ) հյուրանոցի հանդիսասրահում,

Գեղարվեստական համարներով հագեցված պարգեւատրությունն անցավ ջերմ ու հույզերով լի մթնոլորտում: Ուրախությամբ նշենք, որ «Իլիա» մրցանակին արժանացան նաեւ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության անդամներ Մարինա Մոսեսովա-Կիրակոսյանը՝ «Իմ Թբիլիսին» անվանակարգում, Միքայել Անանովը՝ «Թբիլիսցի պոետ» եւ Արտեմ Գրիգորենցը՝ «Ինքնատիպության» համար:

Հավելենք, որ նախագիծը չորս տարվա ընթացքում շրջագայել է Վրաստանի տարբեր անկյուններում, 400-ից ավելի տոսախի շիվեր տնկել:

**ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

*2014 թվականին անցկացված համընդհանուր մարդահամարի տվյալների հանրագումարման շնորհիվ, Վրաստանի վիճակագրության ազգային ծառայությունը հրապարակել է ըստ տարածաշրջանների գրագիտության մակարդակի տվյալները:*

Ըստ հրապարակած տեղեկատվության, այդ առումով ամենավատթար վիճակը Քվեմո Քարթլիի տարածաշրջանում է: Այստեղ բնակվող 423,9 հազար մարդուց անգրագետ է շուրջ 5 հազարը, ինչը կազմում է բնակչության 1,2 տոկոսը: Երկրորդ տեղը զբաղեցնում է Կախեթիի տարածաշրջանը, որտեղ բնակվող 318,5 հազար մարդուց անգրագետ է 2,2 հազարը կամ բնակչության 0,7 տոկոսը:

Գրագիտության պակաս մակարդակի տեսանկյունից, հաջորդ տեղերը զբաղեցնում են Սամցխե-Ջավախեթիի եւ Ռաճա-Լեչխումի-Քվեմո Սվանեթիի տարածաշրջանները՝ բնակչության ընդհանուր թվի 0,5 տոկոսով: Սամցխե-Ջավախեթիի 160,5 հազար բնակիչներից գրել-կարդալ չգիտի 802-ը, իսկ Ռաճա-Լեչխումի-Քվեմո Սվանեթիի 32 հազար բնակչից անգրագետ է 160-ը: Անգրագիտության առումով հաջորդ հորիզոնականը բնակչության ընդհանուր թվի 0,4 տոկոսով զբաղեցնում են Մցխեթա-Թիանեթիի եւ Շիդա-Քարթլիի տարածաշրջանները: Բնակչության ընդհանուր թվի 0,3 տոկոսով ցուցակը շարունակում են Աջարիայի, Իմերեթիի, Սամեգրելո-Զեմո Սվանեթիի եւ Գուրիայի տարածաշրջանները:

Հատկանշական է, որ անգրագիտության տեսանկյունից, վերջին հորիզոնականը զբաղեցնում է Վրաստանի մայրաքաղաքը: Թբիլիսիում անգրագիտության մակարդակն ամենանվազն է՝ 0,1 տոկոս: Մայրաքաղաքում գրանցված 1108,7 հազար բնակչից անգրագետ է 1,1 հազարը:

ՄԵՐ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱՐԴԻԿ

# ՄԵՐՈՒԺԱՆԻ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

*Թբիլիսիի Հավլաբար թաղամասի Արամյանցի հիվանդանոց տանող նեղ փողոցում ապրում է ճանաչված նկարիչ Մերուժանը: Ես նրան կկոչեի երկու դարաշրջանների մարդ, քանի որ նրա գեղանկարչության մեջ առաջատար են երկու, թվում է, թե միմյանց բացառող եւ անհամատեղելի գեղարվեստական ուղղություններ՝ սրբանկարչությունն ու աբստրակցիոնիզմը՝ ավանգարդիզմի տարրերով: Դժվար է պատկերացնել, որ մի նկարիչը կարող է լինել եւ Անդրեյ Ռուբլյովի եւ Կազիմիր Մալեւիչի ժառանգորդը միաժամանակ: Թեպետ հին Հավլաբարում կարելի է հանդիպել ոչ միայն նման տարօրինակությունների ու հրաշքների: Մերուժան Շահումյանի հյուրասենյակի պատերը զարդարված են կրոնական սյուժեներով եւ ավանգարդային գործերի կտավներով, որոնցից մեկը ես կանվանեի «Չորս Մալեւիչ»՝ տարբեր գույների չորս քառակուսիների պատճառով: Կրոնական բնույթի կտավները ստեղծված են հին հայկական մանրանկարչության ոճով: Այստեղ առաջնային է հարթ պատկերը՝ առանց հեռանկարի տարրերի: Թեպետ, չնայած դրան, այդ սրբերը ներկայացված են առավել մարդկային, դրա հերոսներն ունեն սիրտ ու հոգի:*



Նկարչի աշխատանքների մեծ մասը որոշակիորեն կապված է ծիսականի հետ: Կտավների մի ողջ շարք ոգեշնչված է առաջին դարից մինչեւ մեր ժամանակաշրջանը Կովկասի լեռան գեղանկարչությամբ, սիլուետային պատկերներով, որոնք ներառում են հին նկարիչների կողմից օբյեկտների, երեւույթների եւ անմիջականորեն կյանքի պատկերման մեջ ներդրած ծիսական իմաստը:

Նկարները շոշափում են հին մարդկանց կյանքի կարեւորագույն ոլորտները՝ արարողություններն ու ծիսակատարությունները, որսորդությունն ու երկրագործությունը, շրջապատի մարդկանց եւ կենդանիների:

Այսպիսով, այդ պատկերների սեմանտիկ կառույցն իր արձագանքը գտավ նկարչի հոգում եւ, անցնելով արդի աշխարհայացքի պրիզմայի միջով ու վերածված կանոնների, վերաճեց կերպարների շարքի՝ ցուլ, գայլ, մրջնակեր, մեդիտացիա, որսորդ եւ այլն: Այդ աշխատանքների միտվածությունն ուժեղացնում է իմաստով ու նշանակությամբ, բծախնդրությամբ ընտրված ռուները, որոնք խնամքով տեղակայված են կտավի վերին ձախ անկյունում: Առաջնային պլանում հստակորեն ներկայացված են տարօրինակ կերպարներ՝ զարդարված ծաղիկներով հարուստ ձեւակերպումներով, սերտորեն հյուսված ավանդույթների եւ ծիսական խորհրդանիշերով: Այդ շարքից աչքի է ընկնում «Որսորդը», որը նվիրված է Զուլեյկա Բաժբեուկ-Մելիքովային:

Կրոնական թեմաներով հետաքրքրվող նկարիչների շրջանում միշտ եղել են վարպետներ՝ ստեղծագործական տարբեր որակներով ու ոճերով, որոնք համապատասխանում են երկու հիմնական ձեւերի՝ աշխարհական կամ եկեղեցական-պաշտամունքային, որին վերաբերում է նաեւ սրբանկարչությունը: Կրոնական թեմաներով արդի գեղանկարչությունը որոշակիորեն տարբերվում է 15-17-րդ դարերի արվեստից եւ հաճախ ստեղծագործողին մեծ ազատություն է շնորհում, սակայն Մերուժան Շահումյանն ընտրել է հայկական մանրանկարչության եւ սրբանկարչության ավանդներին հետեւելը:

Շահումյանի կրոնական արվեստը սերտորեն կապված է հարազատ քաղաքի հետ եւ «Թբիլիսյան ավետման» մեջ նա կարծես թե փոխադրում է Նազարեթ: Եվ ահա, զարդարված պատշգամբների ֆոնի վրա, որտեղ կյանքը անշտապ ընթացք ունի, ծավալվում են ավետարանչական իրադարձությունները: Նուրբ վարդագույն հագուստով Գաբրիել հրեշտակապետը երկնային երաժշտությամբ ուղեկցում է Աստծո ուղերձը, եւ նրա առջեւ նստած կույս Մարիամը ուշադրությամբ լսում է նրան, թեքում գլուխը՝ ի նշան հնազանդության ու համաձայնության: Եվ հետեւում շարժվող մարդկանց հոսքը, որը միաժամանակ ցուցադրում է ե՛ւ մարդկային կյանքի ընթացքը, ե՛ւ սերունդների հաջորդայնությունը, ե՛ւ տեղի ունեցած հրաշքի պատվին տոնակատարությունը...

Մերուժանի կրոնական թեմայով գործերից մեկը մեր տանն է. դա «Մոգերի խոնարհում» ավետարանչական սրբանկարչական սյուժեով կտավն է: Երեք ծնկաչոք իմաստունններն իրենց նվերներով ներկայացված են Աստվածամոր եւ նորածին Հիսուսի առջեւ՝ նրան կոչելով թագավոր: Նրանք տարբեր են. ավագը՝ արծաթամորուք ծերունի, երկրորդը՝ միջին տարիքի սեւ մորուքով եւ կրտսերը՝ սովորական արտաքինով, ոչնչով աչքի չընկնող, պատկերվել է աղոթողի դիրքում՝ արժանին մատուցելով Հիսուսին:

Փրկչի մսուրի կողքին նստած Աստվածամոր դեմքին որոշակի անտարբերություն է դրոշմված, նա վեհ է, նրա արտահայտիչ հայացքը, հանգստությունը կարծես անտարբեր սահում են նվերների վրայով: Եվ անգամ Հրեշտակն է ներկայացված մարմնեղեն, նա չի սավառնում երկնքում, այլ կանգնած է կենտրոնում, խոնարհված Մարիամի կողմը եւ հավասարակշռում է կոմպոզիցիան՝ դրան հաղորդելով վերելքի միտում: Նրա թեւերը ծածկված են սիրամարգի զարդարված փետուրներով եւ Հրեշտակին տալիս են հանդիսավոր եւ տոնական տեսք: Նրա մանկական միամիտ դեմքը լուսավորված է ժպիտով, ուշադիր նայում է: Նկարն ինքը իրականացվել է հայկական սրբանկարչության համար ավանդական գույներով, կոլորիտը սեղմ է ու բազմերանգ, ինչը կտավին խստություն է հաղորդում, կրոնական ասքետիզմ: Ավանդական քարանձավը նկարիչը տրանսֆորմացրել է ծովային խխունջի տեսքով, որը ուխտագնացության խորհրդանիշն է: Հատկանշական է, որ Վրաստանի հայկական համայնքի ներկայացուցիչները հենց այդ կտավն ընտրեցին համայն աշխարհի հայերի ծննդյան շնորհավորանքի պատկերազարդման համար:

Սակայն, գոյություն ունի գեղանկարչության եւս մի ուղղություն, որը գրավել է Մերուժան Շահումյանին՝ դա աբստրակցիոնիզմն է: Կարծես թե այն արմատականորեն հակադրվում է կրոնական թեմային, այն հրաժարվում է պատկերի առարկայնությունից եւ չի ենթարկվում նկարչության բազմադարյա ավանդական արմատացած հիմնադրույթներին, ընդհակառակը, ծառայում է քաոսայնությանը եւ առաջին հայացքից զուրկ է իմաստից: Թեպետ աբստրակցիոնիզմի նպատակներից մեկը հարմոնիայի հաստատումն է: Կոմպոզիցիաների իմաստը փոխանցվում է գույնի եւ ձեւերի նուրբ զգայականությամբ ու համադրմամբ, եւ ոչ պակաս նշանակալի խորհրդանիշերով: Կոմպոզիցիան լիարժեքություն եւ կատարելություն է ստանում ծիսական բանաձեւերի միջոցով, որոնք ներառված են մարդկային գիտակցության մեջ: Դրա շնորհիվ, Շահումյանի գործերի միտվածությունը, ինչպիսիք են «Հավերժական շարժում», «Օզոնային անցք», «Հույս, սեր եւ գիտություն» շարքերը, ձեռք է բերում իմաստային ծանրաբեռնվածություն: Հին հայկական ձեռագրերը, որոնք ուսումնասիրում է նկարիչը, վերածվում են յուրատեսակ պալիմպսեստի:

Եվ վերջում ավելացնեմ ու շեշտեմ, որ Մերուժան Շահումյանի ստեղծագործության կոլորիտը նրան կանգնեցնում է Վրաստանի թբիլիսյան հայկական գեղարվեստի դպրոցի մյուս ակնառու ներկայացուցիչների շարքում:

**ՎԻԿՏՈՐՅԱ ՊԻՐԱԴՈՎԱ**

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԿԻՆԸ՝ ԱՄՈՒՍՆՈՒ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱ՞Ն...



***Ըստ իս, հոգեբանական առումով, փղամարդ-կին հարաբերությունները միշտ եղել ու մնում են ամենաանբացատրելին ու ամենազարմանալին: Հետաքրքիր է, գիտականորեն ինչպե՞ս է ցեւակերպվում փղամարդու վրա կնոջ ազդեցությունը:***

***Ն.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ***

***Թբիլիսի***

Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ կինը տղամարդու կյանքում, եւ ի՞նչ փոփոխություններ ու հատկանիշներ կարող են ի հայտ գալ տղամարդու մեջ՝ որպես հետեւանք իր եւ կնոջ փոխհարաբերությունների:

***Էլեգանտ խոսք:*** Այն հայտնվում է տղամարդու մոտ, երբ կինը գեղեցիկ է շփվում իր ամուսնու հետ, քանի որ ամուսինը կլանում է կնոջ խոսելաձեւը:

***Ամուսնու աշխատունակությունը:*** Եթե բնակարանում հանգիստ մթնոլորտ է, որը թույլ է տալիս ամուսնուն թուլանալ եւ հանգստանալ տանը, ապա նրա հիշողությունը, լոգիկան, հոգեվիճակը փոխվում է հասարակության մեջ:

***Ելամտություն:*** Եթե կինը հնազանդվում է ամուսնու կամքին, չի ընդդիմանում նրա կայացրած որոշումներին, ապա ամուսինը դառնում է ավելի խելամիտ ու ինքնավստահ:

***Նպատակասլացություն:*** Եթե կինը շահագրգռված է իր ամուսնու հետաքրքրություններով, նպատակներով ու ձգտումներով, ապա ամուսինը դառնում է շատ նպատակասլաց մարդ, եւ նրա մոտ հայտնվում են հավելյալ հնարավորություններ նպատակին հասնելու համար: Իսկ եթե կինը կարծում է, որ ամուսնու հետաքրքրությունները հիմարություն են, ապա նա փակում է ամուսնու բոլոր հնարավորությունները նպատակներին հասնելու համար:

***Համբերություն:*** Եթե կինը համբերատար է ամուսնու թերությունների նկատմամբ, ապա ամուսինն էլ դառնում է համբերատար կնոջ էմոցիաների եւ կամակորությունների նկատմամբ: «Կինը ընտանիքի փրկությունն է կամ կործանումը» (*Ամիել, շվեյցարացի գրող, բանաստեղծ*): Այնպես որ, սիրելի' կանայք, ընտանեկան կյանքում, ինչպես նաեւ ամուսնու ձեռքբերումների գործում, բավական մեծ է նաեւ ձեր ներդրումը:

**Հ.Գ.** Իհարկե, այս ցանկը կարելի է երկար շարունակել, ինչպես նաեւ կազմել մյուսը՝ թե ինչ ազդեցություն կարող է ունենալ տղամարդը կնոջ կյանքում, սակայն մի պարզ ճշմարտություն, որ պարտավոր են հիշել բոլորը. ընտանիքը միություն է, որ ստեղծել եւ օրհնել է Աստված, եւ շատ կարեւոր է, որ այդ միությունը կապված լինի սիրո, ներդաշնակության ու համերաշխության կապերով:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑ



***Տարիների ավելացմանը զուգընթաց, նկատել եմ, որ հիշողությունս սկսում է դավաճանել: Սկսում եմ մոռանալ անունները, դեմքերը... Երբեմն այդ պատճառով անհարմար իրավիճակում եմ հայտնվում: Ինչպե՞ս կարելի է բարելավել հիշողությունը, գույք գիտականորեն կա՞ն դրա փորձարկված մեթոդները:***

***Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ***

***Ախալքալաքի***

ԱՄՆ-ի Բիրգամ Յանգի համալսարանի գիտնականները կապ են գտել վազքի եւ հիշողության բարելավման միջեւ: Այս թեմայով հետազոտությունը հրապարակված է Neuroscience հանդեսում:

Գիտնականների կարծիքով, վազքը նվազեցնում է խրոնիկական սթրեսի բացասական ազդեցությունը հիպոկամպի՝ գլխուղեղի այն մասի է հիշողության համար:

Գիտնականները գիտափորձեր են կատարել մկների վրա: Կենդանիների մի խումբն անվակներ է օգտագործել չորսշաբաթյա ժամանակահատվածում (օրական միջին հաշվով վազելով 5-ական կիլոմետր), մինչդեռ մկների մյուս խումբը վարել է սակավաշարժ ապրելակերպ: Յուրաքանչյուր խմբի կեսը ենթարկվել է սթրեսային իրավիճակների, ինչպիսիք են քայլքը՝ բարձրացված հարթակով կամ լողը՝ սառը ջրում:

Բոլոր կենդանիների մոտ ուսումնասիրել են հիշելու ունակությունը՝ ստիպելով անցնել լաբիրինթոսը: Պարզվել է, որ սթրես տարած մկները, որոնք ունեցել են ֆիզիկական ծանրաբեռնություն, խնդիրն ավելի լավ են հաղթահարում, քան նրանք, որոնք վազքով չեն զբաղվել: Նույնպիսի առավելություն է արձանագրվել նաեւ ոչ ակտիվ մկների հանդեպ ակտիվ մկների մոտ, որոնք սթրեսի չեն ենթարկվել:

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

## ԵՐԵՔ ԿԻՆ, ՈՒՄ ՄԱՍԻՆ ՏՂԱՄԱՐԴԸ ՀԻՇՈՒՄ Է ՈՂՋ ԿՅԱՆՔՈՒՄ

*Ցանկացած տղամարդու կյանքում կա այնպիսի կին, որի մասին նա ամեն անգամ հիշում է ջերմությամբ ու քնքշանքով: Միայն այդ կնոջ անվան հիշատակությունը տղամարդու վրա անհասկանալի տրտմություն է բերում: Անգամ, եթե նա արդեն մի քանի տարի ապրում է երջանիկ ամուսնությամբ եւ շատ է սիրում իր կնոջն ու երեխաներին: Իսկ ո՞վ կարող է լինել տղամարդու անցյալի այն կինը, ում այդպես էլ նա չի կարողանում մոռանալ: Իհարկե, տարբերակները բազմաթիվ կարող են լինել, սակայն, շատ հավանական է, որ ձեր տղամարդը ոչ մի կերպ չի կարող մոռանալ ստորեւ նշվող 3 կանանցից որեւէ մեկին:*

**1. Նրա առաջին սերը**

Խոստովանեք, որ դուք էլ եք ժամանակ առ ժամանակ հիշում այն հմայիչ երիտասարդին, ում սիրահարված եք եղել վաղ պատանեկության շրջանում: Շատ քչերը կարող են իսկապես մոռանալ իրենց առաջին սերը, այդ ժամանակվա զգացմունքներն ու զգացողությունները: Ընդ որում, կապ չունի՝ այդ սերը փոխադա՞րձ է եղել, թե՞ անպատասխան: Նույն կերպ էլ՝ ձեր տղամարդը դժվար թե ամբողջությամբ իր գլխից հանած լինի նրան, ում կողքին նա իրեն այլ տեսանկյունից է նայել:



Չէ՞ որ հենց նրա հետ է նա անսպասելիորեն հասկացել, որ կինը կարող է փոխել իր ողջ կյանքը: Առաջին սերն ամենամաքուր եւ միամիտ զգացմունքն է: Եվ եթե անգամ պատանեկան հույզերն ու երազանքները չեն իրականացել ինչ-ինչ պատճառներով, ոչ մի տղամարդ երբեք չի մոռանա իր առաջին սիրո մասին: Նա միշտ կհիշի, որ հենց այդ աղջիկն է իր մեջ արթնացրել ամենալուսավոր եւ նուրբ զգացմունքները: Ինչպե՞ս կարելի է մոռանալ նրան, ում ժպիտի համար անգամ, տղամարդը պատրաստ է եղել սարեր շուռ տալ ու գետերի հուն փոխել:

**2. Անհասանելի կինը**

Միգուցե տղամարդն այդ կնոջն ավելի քիչ է սիրել, քան մյուսներին, հնարավոր է, որ ընդհանրապես չի էլ սիրել, սակայն դրա փոխարեն, նա կրքոտ կերպով ցանկացել է այդ կնոջը, երազել, որ այդ շքեղ կինը գոնե մեկ անգամ իրենը լինի: Հանուն դրա, նա պատրաստ է եղել գնալ անհավանական, անմիտ քայլերի, միգուցե նաեւ մեծ գումարներ է ծախսել, բայց կինը, միեւնույն է, մերժել է նրան: Այդպիսի կինը խիստ կպչում է տղամարդու ինքնասիրությանը: Հենց դա էլ այն բանի պատճառն է, որ այդ կինը մեկընդմիշտ մնա ձեր տղամարդու հիշողության մեջ:

**3. Այն կինը, ում նա կորցրել է**

Շատ հաճախ տղամարդը գիտակցում է, որ շատ է գնահատում ու սիրում այն կնոջը, ում կորցրել է, եւ վերջինս այլեւս նրա կողքին չէ:

Մի անգամ նա հեռացավ, ու պարզվեց, որ իր կյանքն այլեւս իմաստ չունի ու կորցրել է նախկին հմայքը: Այդպիսի կորստից հետո, տղամարդը սկսում է գիտակցել իր սխալները, ընդունել ու խոստովանել, որ նրա հետ քիչ ժամանակ է անցկացրել, նեղացրել իր վերաբերմունքով ու արարքներով: Միայն այդ ժամանակ է նա հասկանում, որ չի կարողացել իսկապես գնահատել այդ կնոջ հոգատարությունը, սերն ու ջերմությունը: Բայց վերադարձնել ոչինչ այլեւս հնարավոր չէ: Չափազանց ուշ է: Նա ընդմիշտ է գնացել:

Եթե անգամ որոշ ժամանակ անց տղամարդն այլ կնոջ սիրի, նա մեկընդմիշտ կհիշի նրան, ով իրեն սովորեցրել է իրական սերը ճանաչել, ճիշտ է՝ միայն նրա հեռանալուց հետո: Իհարկե, ցանկացած կնոջ էլ հաճելի է գիտակցել, որ ինքն անջնջելի հետք է թողել տղամարդու հոգում, որ վերջինս հիշելու է իրեն իր ողջ կյանքի ընթացքում, սակայն ինչո՞ւ մտածել նրա մասին, թե ինչ զգացմունքներով ու մտքերով է ձեզ հիշում ձեր նախկին տղամարդը: Ավելի կարեւոր է իմանալ, թե ինչ է զգում ձեր նկատմամբ նա, ում դուք սիրում եք:

## ԱՖՈՐԻԶՄՆԵՐ ՄԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

❒ Մոր սիրտն անդունդ է, որի խորքում միշտ ներում կգտնվի:

❒ Այն ձեռքը, որն օրորոց է օրորում, ղեկավարում է աշխարհը:

❒ Ազգի ապագան մոր ձեռքերում է:

❒ Ամեն ինչ գեղեցիկ է մարդու մեջ՝ շնորհիվ արեւի ճառագայթների եւ մոր կաթի:

❒ Չկա ոչինչ ավելի գեղեցիկ, քան փոքրիկ երեխան արժանապատիվ, երջանիկ մոր գրկում:

❒ Մայրությունը ամենազգայական փորձն է կնոջ կյանքում:

❒ Մոր առաջին նվերը կյանքն է, երկրորդը՝ սերը, իսկ երրորդը՝ ըմբռնումը:

❒ Մայրական սերն այգի է, որտեղ արեւը միշտ շողում է, եւ տարվա ընթացքում միշտ գարուն է:

❒ Մոր համբերությունը նման է ատամի մածուկի պարկերին. այն երբեք ամբողջությամբ չի վերջանում:

❒ Ոչ մեկը չի կարող հասկանալ երեխային այնպես, ինչպես իր մայրը:

❒ Մայրությունը միակ աստվածային բանն է, որն աթեիզմ չի ճանաչում:

❒ Մայրությունը հավերժ կոչում է:

❒ Մենք մեր ծնողներին պետք է սիրենք եւ գնահատենք բոլորից շատ:

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Ամուսինը՝ կնոջը:*

*- Սիրելի'ս, որտե՞ղ է մեր շաքարը, երկու ժամ է՝ չեմ գտնում:*

*- Դու ընդհանրապես ոչինչ չես կարողանում գտնել: Զուգարանում ա, կոֆեի բանկայի մեջ, որի վրա «աղ» ա գրված:*

*☺ Երկու ընկեր՝ տարիներ անց.*

*- Հիշում եմ, որ դու մի քանի տարի առաջ՝ մի աղջկա էիր սիրում: Եվ ի՞նչ՝ ամուսնացա՞ր նրա հետ:*

*- Չէ', չամուսնացա:*

*- Իսկ դու պատմեցի՞ր նրան հարուստ հորեղբորդ մասին:*

*- Հա', նա հիմա հորեղբորս կինն է:*

*☺ Ամերիկյան ընտանիք: Կինը զանգում է ամուսնուն.*

*- Սիրելի'ս, շուտ տուն արի, քո երեխաները ծեծում են իմ երեխաներին, շուտով հերթը կհասնի մեր երեխաներին:*

*☺ - Ինչո՞ւ դու կնոջիցդ բաժանվելուց հետո ամուսնացար նրա քրոջ հետ:*

*- Որպեսզի երկրորդ զոքանչ չունենամ:*

*☺ Կինը.*

*- Սիրելի'ս, ես միշտ վստահ եմ եղել, բայց հիմա եւս մեկ անգամ ուզում եմ լսել՝ դու ինձ սիրո՞ւմ ես:*

*- Ինչքա՞ն է պետք,- որոշ ժամանակ մտորելուց հետո, հարցնում է ամուսինը:*

*- Երեք հազար դոլար: Դա մի շքեղ մուշտակ է. շատ կհավանես:*

*- Լավ:*

*Մի քանի րոպե անց՝ ամուսինը.*

*- Լո'ւս, ես քեզ ասե՞լ եմ, որ քեզ շատ եմ սիրում, որ դու ամենագեղեցիկն ու ամենախելացին ես աշխարհում:*

*- Ինչքա՞ն,- որոշ ժամանակ մտորելուց հետո, հարցնում է կինը:*

*- Երկու օր, Լո'ւս ջան, մի քիչ ձուկ բռնեմ ու գամ:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ԿԱՅԱՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՂ ԵՎ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Ազգային ժողովի կողմից մարտի 2-ին Հայաստանի նախագահ ընտրված Արմեն Սարգսյանի հետ, ով, սահմանադրության համաձայն, պաշտոնը կստանձնի հանրապետության նախորդ նախագահի լիազորությունների ավարտի օրը:*

Հանդիպմանը Սերժ Սարգսյանը շնորհավորեց Արմեն Սարգսյանին հանրապետության նախագահի պաշտոնում ընտրվելու առիթով, մաղթեց հաջողություններ եւ վստահություն հայտնեց, որ Հայաստանի համար ապագա տարիները լինելու են լավագույն ձեռքբերումների տարիներ:

Իր հերթին, Հայաստանի նորընտիր նախագահ Արմեն Սարգսյանը շնորհակալություն հայտնեց Սերժ Սարգսյանին շնորհավորանքի եւ բարեմաղթանքների համար:

## ՖԵԴԵՐԻԿԱ ՄՈԳԵՐԻՆԻ. «ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԲԵՔ ԱՎԵԼԻ ՄՈՏ ՉԵՆ ԵՂԵԼ, ՔԱՆ ԱՅՍՕՐ»



*Հայաստանը եւ Եվրամիությունը երբեք ավելի մոտ չեն եղել, քան այսօր: Նման հայտարարությամբ հանդես է եկել Արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով ԵՄ բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին՝ 24 երկրից Երեւան ժամանած «Եվրոպական պլանավորման խորհրդաժողովի» 220 երիտասարդ մասնակիցներին ուղղված իր խոսքում:*

- Անցած նոյեմբերին մենք Բրյուսելում շատ կարեւոր գագաթաժողով անցկացրինք մեր վեց Արեւելյան գործընկերների հետ, իսկ Հայաստանի հետ ստորագրեցինք երեք հիմնարար փաստաթղթեր: Ստորագրեցինք նոր համագործակցության համաձայնագիր, որը հուսով ենք, ավելի կդյուրացնի մեր քաղաքացիների կյանքը ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ Եվրոպական միությունում,- ասաց Մոգերինին:

Նրա խոսքով, ստորագրված նոր համաձայնագրերը կոչված են նաեւ բարելավելու նաեւ Հայաստանի եւ ԵՄ-ի կապակցվածությունը ինչպես ցամաքային, այնպես էլ՝ օդային կապի առումով:

## ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ԲԱՐԵԽԻՂՃ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԱՉՔԻ ԸՆԿԱԾ ԿԱՆԱՆՑ



*Կանանց տոնի նախօրեին, նախագահ Սերժ Սարգսյանն ու տիկին Ռիտա Սարգսյանը մարտի 7-ին նախագահի նստավայրում հյուրընկալեցին տարբեր բնագավառներում ներդրում ունեցած եւ իրենց արդյունավետ ու բարեխիղճ աշխատանքով աչքի ընկած մի խումբ կանանց, ինչպես նաեւ բազմազավակ մայրերի:*

Հայաստանի նախագահը շնորհավորեց հանդիպման մասնակիցներին եւ, ի դեմս նրանց, հանրապետության բոլոր կանանց գալիք տոնի առթիվ: Նախագահը նաեւ պետական բարձր պարգեւներով խրախուսեց նստավայրում հյուրընկալված կանանց, իսկ բազմազավակ ծնողներին`ընտանիքի կայացման եւ ամրապնդման գործում ունեցած մեծ ավանդի, զավակների ֆիզիկական, հոգեւոր եւ բարոյական լիարժեք ու ներդաշնակ զարգացումն ապահովելու համար «Ծնողական փառքի մեդալով» պարգեւատրելուց բացի, խրախուսեց դրամական պարգեւով:

Պարգեւատրման հանդիսավոր արարողությունից հետո, Սերժ Սարգսյանը թեյի սեղանի շուրջ հանդիպում ունեցավ արարողությանը մասնակցող կանանց հետ:

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ 26 ՏԱՐԵԿԱՆ Է

*«Հայաստան» համահայկական հիմնադրամը նշեց իր գործունեության 26-ամյակը: Այս կապակցությամբ ամփոփվել է Հայաստանում եւ Արցախում հիմնադրամի իրականացրած ծրագրերը, որոնք ավելի քան 1100-ն են:*

Ավելի քան 330 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ծրագրեր իրականացրած հիմնադրամի շնորհիվ, կառուցվել, վերակառուցվել եւ իրականացվել է ավելի քան 605 կմ ճանապարհ, 580 կմ ջրագիծ ու ջրատար, 149 կմ գազամուղ, 70 կմ էլեկտրագիծ, 359 դպրոց ու մանկապարտեզ, 24 համայնքային կենտրոն, 500 տուն ու բնակարան, 75 առողջապահական հաստատություն, 58 մշակույթի ու սպորտային կենտրոն, 110 ջերմոց, 169 կրթական, մշակութային ու գիտական ծրագրեր: Հիմնադրամն ունի ավելի քան 700 000 նվիրատու՝ Հայաստանից, Արցախից եւ Սփյուռքից:

Կառույցի աշխատանքներում ակտիվ մասնակցություն եւ մեծ ներդրում ունեն նրա 20 տեղական մարմինները եւ գործընկեր կազմակերպությունները, որոնք ներկայումս գործում են աշխարհի 18 երկրներում: Հիմնադրամն իրականացնում է միմյանց հաջորդող տարաբնույթ ծրագրեր, որոնք կենսական կարեւորություն ունեն մեր հայրենիքի համար:

«Հայաստան» համահայկական հիմնադրամը ստեղծվել է Հայաստանի նախագահի հրամանագրով, 1992 թվականին`:Ըստ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրության, հիմնադրամի բարձրագույն ղեկավար մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որի նախագահը ի պաշտոնե Հայաստանի նախագահն է:

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ ԿՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԻ

«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ

*Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոնից հայտնում են, որ եթե 1964-1974 թվականների ծնված անձինք կամավոր միանան կուտակային բաղադրիչին մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը, ապա պետության կողմից կստանան համաֆինանսավորում:*

Հաղորդագրության մեջ ասվում է. «Եթե ծնվել եք 1964-1974թթ., ապա, կուտակային բաղադրիչին մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը կամավոր միանալու դեպքում, Դուք նույնպես, համակարգի պարտադիր մասնակիցների նման, կստանաք պետության կողմից համաֆինանսավորում: 2018թ. հուլիսի 1-ից հետո, այս արտոնությունը չի գործի, եւ համակարգին կամավոր միանալու դիմում ներկայացնելու պարագայում, կուտակային հատկացումներ կկատարի միայն անձն իր աշխատավարձից:

1964-1974 թթ. ծնված անձինք, այսպիսով, խիստ շահեկան իրավիճակում են. Նրանք կարող են կենսաթոշակ ստանալ միանգամից երկու բաղադրիչներից` պետական բաշխողական եւ կուտակային: Ընդ որում, պետական բաշխողական կենսաթոշակը նրանց համար հաշվարկվելու է աշխատանքային ստաժի բոլոր տարիների համար, ի տարբերություն կուտակային համակարգի պարտադիր մասնակիցների, ում ապագա պետական կենսաթոշակը հաշվարկելիս` հաշվի են առնվելու միայն մինչեւ 2014 թվականը ունեցած աշխատանքային ստաժի տարիները:

Այս արտոնությունից, սակայն, քաղաքացիները կօգտվեն, եթե կուտակային բաղադրիչին կամավոր միանալու դիմում ներկայացնեն մինչեւ այս տարվա հուլիսի 1-ը. այդ ժամկետից հետո միանալու դեպքում, նրանք կկորցնեն պետության կողմից կուտակային հատկացումները եւ այդ գումարների կառավարման արդյունքում ստացվող եկամուտները»:

## ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ` «ԵՌԱԲԼՈՒՐ» ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆՈՒՄ



*Մարտի 5-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս Վազգեն Սարգսյանի ծննդյան օրվա առթիվ, հանրապետության բարձրագույն ղեկավարության ուղեկցությամբ, այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն, ծաղկեպսակ դրեց Սպարապետի շիրմին եւ հարգանքի տուրք մատուցեց նրա հիշատակին:*

*Հայաստանի նախագահը պանթեոնում նաեւ ծաղիկներ խոնարհեց Հայրենիքի անկախության համար իրենց կյանքը զոհաբերած հայորդիների հիշատակին, որից հետո, ներկա գտնվեց Եռաբլուրի Սուրբ Վարդանանց Նահատակաց եկեղեցում Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ անցկացվող պատանի երկրապահների օրհնության կարգին:*

*Սերժ Սարգսյանը նաեւ շնորհավորական ուղերձ հղեց Ծիծեռնակաբերդի բարձունքում եւ զուգահեռաբար բոլոր մարզերում կայանալիք «Պատանի երկրապահ» կառույցի նորագիր անդամների հանդիսավոր երդման կապակցությամբ:*

## ԲԱՐԵՆՊԱՍՏ ՀԻՄՔԵՐ` ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

*2018թ. Հայաստանի կառավարությունը շարունակելու է բարենպաստ հիմքեր ստեղծել կայուն տնտեսական աճի ապահովման համար։ Այս մասին գրառում է կատարել Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանը ֆեյսբուքյան իր էջում:*

*2017 թվականի ընթացքում կառավարությանը հաջողվեց մեր նախանշածից ավելի բարձր ՀՆԱ աճի ցուցանիշ ապահովել: Այս տարի եւս շարունակելու ենք բարենպաստ հիմքեր ստեղծել կայուն տնտեսական աճի ապահովման համար։*

*ՀՆԱ-ի 7,5 տոկոսի աճ հաջողվել է ապահովել արդյունաբերության եւ ծառայությունների հաշվին: Աճել է արդյունաբերությունը: Արդյունաբերության աճի մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում մշակող արդյունաբերության աճը: Եթե արդյունաբերության թողարկումը 2017թ. աճել է 12,6 տոկոսով, ապա մշակող արդյունաբերության աճը եղել է 15,7 տոկոս: Բացի այդ, աճ է արձանագրվել նաեւ առեւտրի եւ ծառայությունների ոլորտում:*

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԴԵՂԵՐԻ ԴԵՂԱՏՈՄՍՈՎ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

*Հայաստանի կառավարության նիստում ներկայացվել է կառավարության կողմից սահմանված դեղերի դեղատոմսով բաց թողնման հստակ ժամանակացույց.*

*1. Հակավարակային (հակաբակտերիային դեղեր, հակասնկային դեղեր, հակամիկրոբակտերիային դեղեր, հակավիրուսային դեղեր, իմունային շիճուկներ եւ իմունոգլոբուլիններ, պատվաստանյութեր) դեղերը բաց են թողնվելու դեղատոմսով 2018 թվականի մարտի 1-ից:*

*2. Ներարկման համար նախատեսված դեղերը` 2018 թվականի հուլիսի 1-ից:*

*3. Բոլոր այն դեղերը, որոնք Հայաստանի Հանրապետությունում գրանցված են որպես դեղատոմսով բաց թողնվող դեղեր, դեղատոմսով բաց կթողնվեն 2018 թվականի հոկտեմբերի 1-ից:*

ԿՐՈՆԱԿԱՆ

# «ՄԻՋԻՆՔԸ» ՆՇՎԵՑ ԵՐԿՐԻ ԲՈԼՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ

***Հավատացյալներով լեցուն Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ կատարվեց «Հանգստյան» ժամերգություն:***



Ներկաներին իր օրհնությունը հղեց եւ օրվա խորհրդին անդրադարձ կատարեց թեմակալ առաջնորդը: Վազգեն սրբազանը հավատացյալներին մաղթեց սիրով եւ հավատքով անցնել նաեւ Պահքի երկրորդ կեսը, որը կշարունակվի մինչեւ Հրաշափառ Հարության տոնը, որն այս տարի Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու տոնացույցով նշվում է ապրիլի 1-ին:

Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում տոնի պարգեւած ուրախությունը լրացվեց Թբիլիսիի թիվ 103 վրացհայկական հանրային դպրոցի հայկական բաժնի 5-12-րդ դասարանների աշակերտների աղոթքով: Եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Սամվել քահանա Թորոսյանի նախաձեռնությամբ եւ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Գայանե Մխիթարյանի կազմակերպմամբ, դպրոցականները ներկայացրին համաշխարհային հոգեւոր գրականության գոհարներից Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» 24 տնից բաղկացած եւ 36 լեզուներով թարգմանված աղոթքի բոլոր տեսակները:

Միջինքի օրը առանձնահատուկ շքեղությամբ եւ գաթայի փառատոնով նշեցին Վրաստանում գործող բոլոր հայկական եկեղեցիներում:

ԶԳՈՒՇԱՑԵ՛Ք, ԵՂԱՆԱԿԸ ՎԱՏԹԱՐԱՆՈՒՄ Է

# ՍՊԱՍՎՈՒՄ ԵՆ ՈՒԺԵՂ ՔԱՄԻՆԵՐ ԵՎ ՍԱՌՆԱՄԱՆԻՔՆԵՐ



***Ինչպես տեղեկացրել է Վրաստանի արտակարգ իրավիճակների դեպարտամենտը, մարտի 9-11-ին երկրի ողջ տարածքում սպասվում է եղանակի կտրուկ վատթարացում:***

Մասնավորապես՝ Արեւելյան Վրաստանում, գլխավորապես Շիդա Քարթլիի, Կախեթիի տարածաշրջանների առանձին վայրերում եւ մայրաքաղաք Թբիլիսիում սպասվում են ուժեղ քամիներ, 28-30 մետր/վրկ արագությամբ:

Արեւմտյան եւ Արեւելյան Վրաստանի լեռնային շրջաններում սպասվում է ջերմաստիճանի կտրուկ անկում, առանձին վայրերում մինչեւ -12-14 աստիճան սառնամանիք:

Վրաստանի ծովափնյա գոտում հնարավոր է 4-5 բալ ուժգնությամբ փոթորիկ, բարձրալեռ եւ լեռնային շրջաններում՝ ուժեղ ձնատեղումներ:

Թբիլիսիում սպասվում են նաեւ հորդառատ անձրեւներ:

Վրաստանի արտակարգ իրավիճակների դեպարտամենտը հնարավոր ուժեղ քամու եւ անձրեւների կապակցությամբ քաղաքացիներին խորհուրդ է տալիս խուսափել բաց տարածքներում գտնվելուց, հնարավորինս պաշտպանել դեմքը եւ գլուխը, անհրաժեշտության դեպքում կապվել 112 հեռախոսահամարով եւ, առանց խուճապի մատնվելու, սպասել փրկարարների գալուն:

# ԳՆԱՍ ԲԱՐՈՎ, ՍԻՐԵԼԻ ԺՈՐԱ



Կյանքի 85-րդ տարում, ծանր հիվանդությունից հետո, իր երկրային կյանքին հրաժեշտ տվեց թբիլիսյան մարզաշխարհում առանձնակի անուն վաստակած բռնցքամարտիկ, Վրաստանի հանրապետության բազմակի չեմպիոն, ԽՍՀՄ բռնցքամարտի առաջնության մրցումների ակտիվ մասնակից Գիորգի Արշակի Շամիրյանը: Ծանոթների շրջանում Գիորգիին մտերմաբար «Ժորա» էին անվանում:

Ծնվել է 1933թ. Թբիլիսիում եւ ողջ կյանքն ապրել քաղաքի հինավուրց «Հավլաբար» թաղամասում: Թաղամասի տաքարյուն տղաներից մեկը լինելով՝ հաճախակի էր մասնակցում պատանեկան ծեծկռտուքներին: Դրանցից մեկը պատանու համար բախտորոշ դարձավ. բռնցքամարտի մարզիչ Բադիկյանը, նկատելով կռվող տղաներին, հաշտեցրեց նրանց ու հաջորդ օրն իսկ Գիորգին ներկայացվեց այն օրերի ճանաչված մարզիչ Լազար Բեժանովին:

Նրա կյանքում սկսվեց անսովոր ու նպատակամետ մի շրջան: Երիտասարդ բռնցքամարտիկին բախտ վիճակվեց մոտիկից շփվել 20-րդ դարի 40-50-ականների մարզական աշխարհի երեւելիների՝ եղբայրներ Գիվի եւ Նոդար Դարբաիսելիների հետ, միեւնույն թիմում մարզվել՝ անվանի վարպետ Անդրո Նավասարդովի հետ: Երիտասարդ մարզիկն իր փայլուն հաղթանակներով նախանձախնդրորեն ծառայեց Թբիլիսիի մարզական պրոցեսին. նա դարձավ «Պիշչեւիկ» համամիութենական մարզական միության բազմակի չեմպիոն: Գիորգի Շամիրյանի ձեռքի տակ աճեցին Վրաստանի մարզական պատիվը պաշտպանող բազում բռնցքամարտիկներ: Նույնիսկ ռինգին հրաժեշտ տալուց հետո, 50-ական թվականներին, վաստակաշատ մարզիկը, անսալով ընկերների խնդրանքին ու հորդորներին, մասնակցեց միութենական մրցումներին, շահեց ոչ ավել, ոչ պակաս հինգ մրցում եւ հերթական անգամ վաստակեց չեմպիոնի կոչումը…

Այլեւս մեր կողքին չէ ընտանիքի հոգատար հայրը, իր թոռներին պաշտող պապիկը, մեր կողքին չէ սրտաբաց, առատաձեռն մարդը, ջերմ ու սփոփող զրուցակիցը:

Խաղաղություն քո աճյունին, սիրելի Ժորա, քո մարդկային կերպարը անմոռանալի կմնա քո հարազատների սրտերում:

***ՀԱՐԱԶԱՏՆԵՐ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐՆԵՐ***

«Վրաստան» թերթի խմբագրակազմը ցավակցում է վաստակաշատ մանկավարժներ Նորայր եւ Ասյա Բաղդասարյաններին, թերթի նախկին աշխատակցուհի Ալինա Բաղդասարյանին՝ նրանց սիրելի խնամու եւ սկեսրայրի՝

***Գիորգի Արշակի ՇԱՄԻՐՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ուսումնական հաստատություն: 4.Հարսանիքում քողով հանդես եկողը: 10.Ընտանի թռչուն: 11.Առակագիր … Խնկոյան: 13.Ալբանիայի քաղաքամայրը: 15.Հայ հեղափոխական, Լենինի զինակիցը: 17.Գինու աման: 18.Ամերիկահայ բանաստեղծուհի … Վան: 19.Հով, ոչ շոգ: 20.Մայր, մեծ մայրիկ: 21.Քաղաք Արցախում: 23.Պետություն Հարավային Ամերիկայում: 25.Մեսրոպյան այբուբենի զինվոր: 27.Անապահով, հույսը չարդարացնող: 30.Ճահճի բնակիչ: 31.Հովհ. Թումանյանի հեքիաթներից՝ «… Հուռին»: 32.«Արեւ բացվեց թուխ ամպերեն, … թռավ կանաչ սարեն» (Կոմիտաս): 35.Քաղաք Ռուսաստանում: 36.Բրուտի աշխատանքի հումքը: 40.Մուրացանի հանրահայտ դրաման: 42.Գետ Վրաստանում: 45.Փոխադարձ դերանուն: 47.Մրգատու ծառատեսակ: 48.Հայկական ճաշատեսակ: 49.Խոնավ, ոչ լրիվ չորացված: 50.Չնչին գումար: 52.Բուք ու …: 55.Հայաստանում լույս ընծայվող թերթ՝ «Ռյա …»: 58.Թումանյանի հերոս: 60.Ժխտական նախածանց: 61.Գետ Հայաստանում: 62.Քաղաք Իրաքում: 63.Հուր, բոց, ատր: 64.Բալետի հայտնի պարուհի … Սարխոշյան:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Պետություն Արաբական թերակղզում: 3.Օրվա մաս: 4.Վրաց դերասանուհի … Վաչնաձե: 5.Հոգի, շունչ: 6.Վրաստանում, Ջվարի եկեղեցու մոտակայքում, Քուռ գետին միախառնվող գետ: 7.Հայ կին գրող: 8.Ախալցիխեում ծնված հայ նկարիչ: 9.Հերոսուհի «Գառնիկ ախպեր» հեքիաթում: 12.Քաղաք Հնդկաստանում: 14.Անձնական դերանուն: 16.…՝ Տ.Մանսուրյանը, գոհ էր Վիլեն Գալստյանի «Զյունե թագուհին» բալետի բեմադրությունից: 18.Պետություն Հարավարեւելյան Ասիայում: 19.Թբիլիսահայ հայտնի նկարչուհի: 22.Մեսրոպյան այբուբենի տառ: 24.Տա…, Շա…: 26.Քաղաք Ֆրանսիայում: 28.Կատվազգի գազան: 29.Վրաց գրող … Ծերեթելի: 33.Հայերենի նախածանց: 34.Չորստողանի բանաստեղծություն: 37.Երկրամաս Ռուսաստանում: 38.Խաղողի «ծառը»: 39.Լիճ Պատմական Հայաստանում: 41.Թունավոր խոշոր օձ: 43.Երկնքի բարձրակետը: 44.Քաղաք Ֆրանսիայի հարավում: 46.Հայ մեծ գրող: 50.Օպերային երգիչ … Գրիգորյան: 51.Քաղաք Հայաստանում: 53.Հայերեն այբուբենի զինվոր: 54.Տապանի տերը: 56.Գիքորի քույրը: 57.Միավորված ազգերի կազմակերպություն: 59.Երկրի անձնավորումը Հունաստանում:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Անեքսիա: 8.Ագարա: 9.Ռուր: 10.Եղեռն: 13.Բասմա: 18.Բրոշ: 19.Խաթաբալա: 22.Նինոս: 23.Պտղատու: 28.Վայել: 29.Անագե: 32.Երե: 33.Մխում: 34.Նեման: 37.ՀԺԿ: 39.Անուն: 41.Իմալ: 44.Լղար: 46.Մի՞թե: 47.Նամ: 49.Ղազ: 50.Խաբուսիկ: 52.Գչիր: 54.Ղասաբ: 55.Քուրա: 56.Լա: 57.Լազեր: 58.Լռին:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ռենե: 2.Քսան: 3.Ծառա: 4.Քարբ: 5.Կայսր: 6.Լավաշ: 11.Ղռան: 12.Ռուան: 14.Աբեղա: 15.Մոնթե: 16.Պաս: 17.Կապ: 20.Թիրախ: 21.Բոհեմ: 24.Տվեն: 25.Այժմ: 26.Ուլան: 27.Սերժ: 30.Նման: 31.Գույն: 35.Եսիմ: 36.Աղաթ: 37.Հող: 38.Կերակուր: 40.Ուրմաս: 42.Մինչ: 43.Լեգրան: 44.Լյուբա: 45.Աղիքե: 48.Ախազ: 51.Բալ: 52.Գալ: 53.Իլի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445